Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 784 - Ա
որոշման

«ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացմանը նպաստելու նպատակով գիտական դրամաշնորհների տրամադրում գիտնականներին և գիտական խմբերին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ օգնության ֆոնդ (630 երկրորդ պողոտա, Նյու-Յորք, ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մ. Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտներ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության տակ գործող գիտական և կրթական հիմնարկներ, բնագավառը՝ գիտական
6.	Ծրագրի բյուջեն	42,900,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	13 գիտական խմբերում ընդգրկված 52 գիտնականներ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մրցույթի հայտարարում կայքերում, Նյու Յորքում գտնվող դրամաշնորհի մրցույթի անցկացման կազմկոմիտեի կողմից մասնակիցների հայտերի ընդունում, հետազոտական խորհրդի կողմից հայտերի գնահատում և հաղթողների ընտրություն, Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից գիտական խմբերի հետ դրամաշնորհային պայմանագրերի կնքում և դրամաշնորհի վճարում, աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով Հայ օգնության ֆոնդի մոնիթորինգի հանձնաժողովի այցելություններ գիտական խմբերին, կազմկոմիտեի կողմից միջանկյալ հաշվետվությունների ընդունում, կազմկոմիտեի կողմից ամփոփիչ հաշվետվությունների ընդունում: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 42,900,000 դրամի չափով, որից՝ դրամաշնորհների տրամադրում գիտնականներին՝ 37,500,000 դրամ և կազմակերպական ծախսեր՝ 5,400,000 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) կոմունալ ծառայությունների ձեռքբերում՝ 1,600,000 դրամ առանց ավելացրած արժեքի հարկի. 2) գրասենյակային պիտույքների ձեռքբերում՝ 800,000 դրամ առանց ավելացրած արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսերը կազմելու են 5,400,000 դրամ՝ ծրագրի ընդհանուր բյուջեի 12.6 %-ը՝ 1) ծրագրի ղեկավարի աշխատավարձ՝ 3,000,000 դրամ. 2) կոմունալ ծառայությունների ձեռքբերում՝ 1,600,000 դրամ. 3) գրասենյակային պիտույքների ձեռքբերում՝ 800,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

11.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ